

թիւնն է: Ո՛րքան էլ որ բարձր լինի որդիներին ուսում ապրու
ծախքը նրա ներթափան զրութիւնից, այնուամենայնիւ զօկ կինը
կաշուց դուրս է գալիս, հազար ու մի զրկանքի է ենթարկում
իրեն, որպէսզի՝ իւր որդին հարեանի որդուց յետ չմնայ, որպէսզի
ինքն էլ կարողանայ պարծիլ, թէ իւր որդին էլ ուրիշ քաղաքում
է սովորում:

Սակայն այս լաւ կողմերի հետ զօկ կինն ունի նաև բուս-
կան պակասութիւններ.—նախ նրա ներքինն արտաքինից շատ
պակաս է զարգացած, ուստի և շատ տւելի բամբասառ է, քան
կարելի էր սպասել՝ դասեւով արտաքինից. նա նաև անքան մաք-
րաւէր չէ, որքան, օրինակ, տխալքալաքքին. նրա մաքրասիրու-
թիւնն էլ արտաբուստ է, բոլոր գիւղերից միայն Վերին Ագու-
լիսը մի բազանիս ունի, որը և՛ տարուայ մեծագոյն մասը փակ
է: Սակայն այս բոլորից աւելի ցաւալին այն է՝ որ նրա սիրտը,
հոգեկան կեանքը, մտքի համեմատութեամբ քիչ է զարգացած:
Սէրը, անկեղծ, սրտագին բարեկամութիւնը, օրօրը, երգեցողու-
թիւնը, նուազածութիւնը միանգամայն թերի են: Ամբողջ Զօ-
կաստանում մի սիրային արկածք կամ այդ մասին մի սրտաբուլի
երգ յայտնի չէ, շօթօրդի պրտական էլիս աղիկյ այ, քան թէ
սուրբին առածը ցոյց է տալիս նրա կրօնական զգացմունքը, ժո-
ղովրդական երգերի պակասութիւնն ապացուցանում է նրա սրտի
չորութիւնը:

Սե Բնչպէս կարող էր չչորանալ նրա սիրտը, կրբ երկար
տարիների ընթացքում բացակայում են նրա սիրոյ առաքակաները՝
ամուսինը և զաւակները ¹⁾:

ԹԱՂԱԽՆ ԵՒ ՄԵՌԵՆՈՑ

Հիւանդը մերձիմահ դառնալիս՝ նրան խնամողները
շտապում էին հրաւիրել քահանային, որ հաղորդութիւն
տայ նրան: Ապա՝ դեռ չմեռած՝ երեսը դարձնում էին զէպի
աղօթարան՝ արևելք: Երբ աւանդում էր հոգին՝ ձեռները
խաչում էին կրծքին, աչքերը հուփ տալիս՝ որ խփուին:

¹⁾ Հեանելով միւր ընդունած ծրագրին, պէտք էր, որ խօսէինք
նաև զողթնեցիների գործածած կերակրների, ժողովրդական զե-
ղերի մասին ևս, սակայն որովհետև սրանց վերաբերեալ ոչ մի ա-
ռանձնայատուկ բան չգտանք, ուստի և զանց ենք առնում, իսկ
հաւատքի և զպրոցների մասին կը խօսենք՝ ամբողջ Նախիջևանի
գաւառի մասին միանգամից:

Սուգն ու լացը բռնում էր ճշ միայն ամբողջ տունը, այլ և ամբողջ փողոցը: Դրկից, բարեկամ խակոյն հաւաքւում էին լաց լինելու և մօտիկներին մխիթարելու: Գալիս էր քահանան հոգոց ասում և օրհնում մի աման ջուր, որով պէտք է լողացնէին ննջեցեալին: Անմիջապէս առանձնացնում էին ննջեցեալին և նրա հանգած տեղում ճրագ վառում, որ վառ էր պահւում մինչև նրա թաղուիլը: Յետոյ եթէ տղամարդ էր՝ 2 տղամարդ, իսկ եթէ կին՝ երկու կին լողացնում էին:—Ննջեցեալին պարկեցնում էին մի տախտակի վրայ՝ երեսը դէպի արեւը դարձրած և ապա լողացնողները ձեռներին մի մի ծեռնաման (քսակ) անցկացրած, տաք ջրով, առանց սապոնի, լողացնում էին, ակունքով գլխից: Երբ աւարտում էին, կանչում էին անեցիկներին, որ այդ ջրով ձեռները լուանան. ապա նոյն ջրի կաթնան բերինքսը վայր էին դնում և այդպէս թողնում երեք օր, իսկ փոքրիկ կուժը, որով ջուր էին ածում, կտորում էին, որպէսզի Շայլեա ուրիշը չմեռնի և նոյն կժով վերան ջուր չածեն: Այս ժամանակ քահանան կրկին գալիս էր, կարում մի վարչամակ, ու մի նշխարքի ու խնկի հետ դրնում ննջեցեալի բերանին: Մի գոյգ մօմ էլ երեք անգամ վառելուց և հանգցնելուց յետոյ, դնում էին ննջեցեալի աջ ձեռը, ապա տեղական կտաւից պատանք էին կարում և պատանքում, փաթաթում մի կապերտի մէջ և դնում եկեղեցուց բերած հասարակական նաժի մէջ: Շարունակ մօտիկ և հեռաւոր ազգականներ ու ծանօթները գալիս էին տեսութեան և խնդրում քահանային, որ հոգոց ասի:

Սովորաբար ննջեցեալին առաւօտն էին թաղում, ճշ երբեք արևը ծագելուց առաջ կամ մայր մտնելուց յետոյ: Փոքրահասակներին կամ տնից ուղղակի գերեզմանատուն էին տանում, կամ եկեղեցի էին դնում և առանց պատարագ մատուցանելու՝ տանում թաղելու, մինչդեռ հասակաւորներին անշուշտ եկեղեցի էին տանում և պատարագ մատուցանելուց յետոյ վերցնում:

Շատ հազիւ էր պատահում, որ ննջեցեալին երեք-չորս

օր անթաղ պահէին, ուստի և պատահում էր, որ լեսաւր-դեանքն ու վնասներն էլ կամ թաղում էին և կամ թաղ-ման պատրաստութիւնը տեսնելիս արթնանում էին:

Բարեկամներն ու ծանօթները հաւարում էին մեռե-լատունը, մեռելին եկեղեցի տանելու: Ննջեցեալի տէրը երեցփոխից մի երկու բուրու փարա էր վերցնում¹⁾, և մի թաշկինակի մէջ ածած կանգնում ննջեցեալի կողքին: Թաղման տան կարգը կատարելուց յետոյ բոլոր յուղարկա-ւորողները մօտենում էին, թաշկինակի միջից մի մի փա-րա վերցնում և ննջեցեալի վրայ դրուած խաչը համբու-րելով փարան ձգում նրա մօտ դրուած ափսէի մէջ, իբր խաչամարոյր, որ պատկանում էր քահանային²⁾: Կանայք լաց էին լինում ողբեր ասելով, որոնք գրեթէ բոլորն էլ թուրքերէն էին: Վերջապէս ննջեցեալին վերցնում էին և տանում եկեղեցի, Նիէ փոքրահասակ էր ննջեցեալը՝ ան-միջապէս կատարում էին թաղման կարգը և տանում գե-րեղմանատուն, իսկ Նիէ շափահաս՝ սկսում էին պատա-րագ մատուցանել: Պատարագի աւարտին կանայք շրջա-պատում էին նաժը, և լալիս ու թուրքերէն ողբեր ասում: Քահանան էլ զանձ էր ասում, որից յետոյ միմիայն յու-ղարկաւորող կանայք համբուրում էին խաչը և խաչամա-րոյր ձգում, առնելով փարաները մեռելատէրի թաշկինա-կից: Ապա չորս մարդ ընտելով նաժի չորս ծայրերից, երեք անգամ բարձրացնում էին, դնում գետնին և յետոյ՝ վերցնում և տանում գերեղմանատուն: Այս ժամանակ ննջեցեալի տէրը յուղարկաւորող կանանց մի մի թիքա (լուսաշ հացի մէջ փաթաթած միս կամ պասին՝ լոբի, կարտֆիլ, բակլա) և մի մի բաժակ գինի էին տալիս, որ ննջեցեալի հոգու մասին բարեմախտութիւններ անելով

¹⁾ Սա տանկական փող է, ութ փարան արժէր մի շահի-մէկ ու կէս կողէկ:

²⁾ Յետոյ փարայի փոխարէն ձգում էին պղնձի կողէկ, որ մօտաւորապէս 2 ¹/₂ փարա արժէր, ապա մի քառորդ արծաթ կո-պէկ, որի վեցը մի շահի, 5 կ. արժէր:

խոսում էին և յետ դառնում դէպի սգաառունը: Տղամարդիկ փոփոխակի վերցնելով նաժը՝ զնում էին գերեզմանատուն, ուր թաղման կարգը կատարելուց յետոյ բոլորը համարում էին ննջեցեալի վրայ դրուած խաչը և խաչհամարյր ձգում, դարձեալ վերցնելով ննջեցեալի տիրոջ թաշկինակից: Ապա ննջեցեալին հանում էին նաժից ու կապերտից ու զնում գերեզմանի մէջ, վերցնելով սրա վերայ խաչաձև դրուած թին ու բրիչը: Երբ քահանան ննջեցեալի մօտիկ անձնաւորութեան բռում հող էր օրհնում և ձգել տալիս գերեզմանի մէջ, բոլոր յուզարկաւորողները հետեւում էին նրան և երեքական բռւ հող ձգում: Երբ թաղման կարգը աւարտում էր, նաժը բերինքսիւկայր էին դարձնում, դադման ու բահը կոթահան անում, որպէսզի այլևս ննջեցեալ չպատահի:

Ապա ննջեցեալի տէրը ամէն մի յուզարկաւորողի հացի մէջ փաթաթած մի պատառ միս և մի բաժակ գինի կամ օղի էր մատուցանում, սկսելով քահանայից, որ ուտելուց յետոյ հողոց էր ասում: Յետոյ ամէն մինը մօտենում էր ննջեցեալի տիրոջը և գլուխ տալով ասում: Աստուած հոգին լուսաւորի, սուրբ հոգով մխիթարիք: Այնուհետև բոլորն յետ էին դառնում, ննջեցեալի տիրոջից հրաւիրուելով հոգուհացի: Գրեթէ բոլորն էլ զնում էին: Տան դռան առաջ մի ծառայ աջ ձեռին մի սափոր, ձախին կտնկ բռնած, ուսին էլ սի սրբիչ ձգած ջուր էր ածում՝ որ յուզարկաւորողները ձեռները լուանան: Անմիջապէս ծալապատիկ նստում էին արդէն սփռած սփռոցների շուրջը և քահանայի օրհնութիւնից յետոյ սկսում ուտել: Նախ մինը առաջ էր բերում զնդում խորոված (դդուկից, մսից և ստիից պատրաստած) մի մեծ ափսէի մէջ ածած և մօտենալով հացի նստողներին մի մի գդալ ածում էր նրանց ներկայացրած հացի վրայ, որ ուտեն: Յետոյ մատուցանում էին ամէն մինին կամ երկուսին մի ամանով բոգրաշ, շիլաճօշ, պանճարաճօշ և տոլմա. իսկ պասին՝ բնկոյզով պատրաստած զնդում խորոված, մըշաճօշ (լորու ճաշ),

ձէթով շիւաճօշ և բրնձով տուրմա: Ճաշի ընթացքում քահանայի առաջարկով խմում էին մի մի բաժակ զինի, բարեմախտելով, որ Աստուած լուսաւորէ այս գերդաստանի նոր, հին, և գիւղի բոլոր ննջեցեալների հոգիները: Ներքին Ազուլիսում ճաշի աւարտին սպասաւորը մի ամսէի մէջ երկու խնձոր կամ երկու սերկեիլ գրած մատուցանում էր քահանային: Սա էլ վերցնում էր, հոտ քաշում և տալիս օինը աջ, միւսը ձախ կողմը նստողներին: Ամֆիշապէս սպասաւորը քահանային և սրանց մի մի բաժակ զինի էր մատուցանում, որոնք խմում էին նոր ննջեցեալի հոգու փրկութեան մասին բարեմախտութիւններ անելով և յետոյ խնձորը տալիս իրենց մօտ նստողին: Երբ բոլորը այս կերպ խմում էին հոգու բաժակը, խնձորը կրկին տալիս էին քահանային, որ հոտ էր քաշում և զնում գրպանը և վեր կենում շոգւոց ասում: Ապա աղամարդիկ ցրում էին «Աստծով մխիթարուիս» ասելով ննջեցեալի տիրոջը: Տղամարդկանցից յետոյ կանայք էին ճաշում, որոնց նախազանում էր իրիցկինը: Ճաշից յետոյ առաջ էին բերում ննջեցեալի շորերը և ողբեր ասելով լաց լինում: Ի վերջոյ ջուր էին մատուցանում սրանց, որ արտասուալից աչքերը լուանան և զնան իրենց տները: Երեկոյեան քահանան, գերեզման հատողները և ննջեցեալին լողացնողները կրկին գալիս էին, հոգոց ասում և ընթրում: Այս կրկնում էր եօթ օր շարունակ:

Թաղման երկրորդ օրը, առաւօտեան զնում էին շեռնահոգ: Բարեկամ և ծանօթ կանայք մի մի կուժ զինի կամ օղի և մրգեր առած գալիս էին մեռելատուն, բերածները տալիս տանտիկնոջը և ննջեցեալի շորերը առաջ բերելով կրկին լաց լինում և ողբեր ասում: Ետոյ գալիս էր քահանան, հոգոց ասում և բոլոր կանանց հետ զնում գերեզմանատուն: Շրջապատելով գերեզմանը՝ ոտների և զլիւի մօտ մի մի մօմ էին վառում և մինչդեռ քահանան կատարում էր ծէսը, կանայք բարձրաձայն ողբեր էին ասում և լալիս: Երբ աւարտում էր այդի կարգը՝ մեռելա-

տէրը, որ իւր հետ բերած էր լինում օդի, գաթայ, խաշած միս և մրդեր, հիւրասիրում էր բոլորին՝ հէնց գերեզմանի կողքին, որից յետոյ վերադառնում էին մեռելատուն, ճաշում և կրկին ողբեր ասելով լալիս և սալա-խրաքանչիւրը իւր բերած կուժը դատարկելով վերցնում էր և գնում տուն:

«Լխանիք»-ին, թաղման եօթներորդ օրը, սովորաբար պատարագ էին մատուցանում և կանանց ու տղամարդկանց աճադին բազմութիւն հրաւիրում ճոզու հաց ուտելու:

Սոյն օրը ննջեցեալի շորերը, որ թաղման երրորդ օրը բարեկամ կանայք լուացած էին լինում, բաժանում էին առաւելապէս ննջեցեալին լողացնողների և միջանի բարեկամների մէջ:

Հետեւեալ շաբաթ օրը, երեկոյեան, կանայք և տղամարդիկ հաւաքւում էին մեռելատունը, ուր հաց ուտելուց յետոյ սգաւորներին տանում էին եկեղեցին՝ երեկոյեան ժամերգութեան ներկայ գտնուելու: Ժամերգութիւնից յետոյ քահանան մօտենում էր և հոգոց ասում: Իսկ երեք կամ չորս շաբաթից յետոյ բարեկամները հրաւիրում էին սգաւորներին իրենց տուն շարդահանիք».—հիւրասիրում էին նրանց ու նրանց պատճառով հրաւիրւած մօտիկ բարեկամներին ճաշով և թէյով:

Առաջին նաւակատիւքին բարեկամները կրկին հաւաքւում էին ննջեցեալի տունը սգաւորներին մխիթարելու, և հիւրասիրում էին ընթրիքով: Հետեւեալ օրը կրկին հաւաքւում էին և սգաւորների հետ միասին գնում գերեզմանատուն, գերեզմանը օրհնել տալիս:

Ննջեցեալի տարելիցին ունեւորները պատարագ էին մատուցանել տալիս և ճոզու հաց տալիս:

Երեխաների գերեզմանների վրայ խնձոր, մրդեր, ծաղիկներ էին գնում: Մանդեան և գատկի երեկոներին մօմեր են վառում գերեզմանների վրայ:

Այլի կանայք, մինչև կրկին ամուսնանալը՝ իբր սգի նշան՝ երեսներին կնջիկ չէին ձգում:

Թաղման վերաբերեալ սովորութիւնների մէջ այժմ շատ քիչ փոփոխութիւններ են մտած. «թիւրան», հոգուհաց կամ մեռելաճաշը հիմայ էլ են ապիտա Միակ նկատելի փոփոխութիւնը նրանումն է, որ այժմ դադարով, հանդերձներով են թաղում: Դադարի վրայ էլ «երեսաքաշ»—մեռաքսէ կամ մահուդի կտոր—են քաշում, որ թաղման ժամանակ վերցնում են և քահանային նուիրում: Թարմ և արուեստական ծաղիկներից պսակներ են դնում դադարի վրայ, կանայք սև շորեր են հագնում:

Գերեզմանատները գտնւում էին գիւղից դուրս, փոքր ինչ հեռու, այնպէս որ ժամանակի ընթացքում գիւղը մեծանալով շրջապատում էր սրանց, և վերջ ի վերջոյ քանդում, բնակարաններ կառուցանում, ինչպէս Ագուլիսում ս. Քրիստափոր եկեղեցու գերեզմանատունը, ուր այժմ շինական դատարանն ու շուկան են գտնւում: Ամէն մի եկեղեցի իւր առանձին գերեզմանատունն է ունեցել. այս պատճառով և Վ. Ագուլիսում 10 գերեզմանատուն է եղել, որոնցից ամենայարմարը՝ Ս. Յովնանէս եկեղեցու «Բէկօղլու» անուն կրողը և ս. Աստուածածնինը են: Գերեզմանները, գիւղական տների նման, խառն ի խուռն են դասաւորուած, միայն իւրաքանչիւր գերդաստանինը միմեանց մօտ են կուտակուած: Գրեթէ ոչ մի գերեզմանատուն չունի ոչ պարիսպ և ոչ ծառուղիներ: Գերեզմանաքարերը մեծ մասամբ քառանկիւնի են, կան և՛ դադարաձև ու օրօրոցաձև: Ուշագրաւ է, որ կանանց գերեզմանները շատ աւելի բազմաթիւ են քան տղամարդկանցը. պարզ է, որ օտարութեան մէջ դեգերող տղամարդկանցից քչերին է յաջողուել հանգչիլ ծննդավայրում: Տապանադրերը դրաբառ են, և մեծ մասը միօրինակ՝ Այս է տապան այսինչի: Առաջ բերեմ մի երկուսը՝ Վ. Ագուլիսում.

Այս է տապան Մղգսի Ամիրի որդի Զաքարին թիւ 1121թ¹⁾.

¹⁾ Թերևս այս լինի մեզ յայտնի վաճառականը, որի օրագրութիւնը տպագրեց պ. Ա. Քալանթարը:

Այս է տապան մղղտի Աղամիրին կողակից Ասլի Գիւլին. Թ. ՌՃԺԶ.

Այս է տապան Ավղամասի կողակից Հռուսիամին Թվ. ՌՃԺԴ.

ՆՇԱՆԱԽՈՐ ՏՕՆԵՐ

Գողթնում տօներից շատերը կորցրել են արդէն իրենց ազգագրական նշանակութիւնը, ուստի և ես կը նկարագրեմ միայն նրանք, որոնք այնուամենայնիւ նշանաւոր են այդ տեսակէտից.

Վարդապետ. — Սովորաբար առաւօտը միմեանց վրայ ջուր են սրսկում. Մինչև 1850 թուականը դեռ ևս պահպանւում էր այն սովորութիւնը՝ որ այս առաւօտը կանայք թելերի վրայ ամրացնելով ծաղիկներ, խնձոր, մանր վարունկ, և մանաւանդ վարդեր, խաշաձե կապում էին երեսխանների կրծքին և այդպէս տանում եկեղեցի: Պատարագից յետոյ ատենանի առաջ երկու զրակալ էին դնում, որոնցից մինի վրայ Աւետարանն ու նշխարք էին դնում, իսկ միւսի վրայ մի ամանով ջուր: Երբ ժամուորները մօտենում էին Աւետարանը համբուրելու և նշխարք վերցնելու, մի տիրացու ձեռի փունջը թաթախելով ջրի մէջ՝ սրսկում էր սրանց վրայ:

Ճաշից յետոյ կանանց և տղամարդկանց ահագին բազմութիւն հաւաքւում էր դիւղից դուրս՝ մի հրապարակ՝ թխնդում տօք՝ անելու¹⁾: Այս նպատակի համար նշանուած աղջիկների ձեռքով նախապէս մի ամանում կանաչացրած դարու կամ ցորենի մէջ ամրացնում էին շատ անգամ խաշաձե կամ միքանի թեւաւոր փայտ, որը զարդարում էին վարդերով, խնձորով ու մանր վարունկով. Այս զարդարած փայտը կանանչի հետ միասին կոչւում էր թխնդում: Մի պառաւ կին վերցնում էր այս թխնդումը, տանում այդ հրապարակը, վայր դնում և նստելով մօտը

¹⁾ Տէր Յակոբի տետր և Ս. Սարգսեան Ազուլեցոյ բարբառը: